

ՄԷՏԱՄԱՌՈՒՄՅԸ

ՀԱՎԱՏՏԻՍ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ

— ԹԵՐԹԸ 1 ՂԵՆ ԹՈՒՂԹՈՒՆ —

ՓՈՐՐ-ԱՍԻՈՅ ԱՊԱՐԱՅՆ Գ.

Նախորդ երկու յօդուածներէն ընդ բաւական հակիրճ բացատրեցինք փոքր-Ասիոյ անցեալն ու ներկայ գտնուած վիճակն, ինչպէս նաեւ յիշեալ երկրին մէջ տիրած ազգատուութեան և թշուառութեան գլխաւոր պատճառները յիշատակեցինք, ըստ նորոգ և վաւերական տեղեկագրութեան, ինչքան որ կարելի էր ընել մեր այս անձուկ էջերուն մէջ:

Բոլոր այդ գրութեանցէն ամեն նշալիսին կերպիւ առ' եղբաւ կացութիւնը միայն յառաջ կը գար որ եթէ այդպիսի երկիր մը տակաւին ընդ երկար անհոգ և անինամթօղութիւն պարզապէս կ'կործանի ու կ'կորսուի՝ ուրիշ բան չըլլար:

Միանգամայն և փոքր-Ասիոյ բարեփոխման վերականգնման մեծ գործն ալ իւրապէս քաղաքակրթութիւնը զօրութեան կապակցութեամբ որոշ առաջը անհնարին բան չը կրնար կենալ, և որ մինչև ցարդ իւրապէս մէջ երկիր չենցեւրու և ճոխացնելու համար գործած հրաշալիքաց մէկ փոքր մասն անգամ մ'եթէ փոքր-Ասիոյ մէջ ի գործ դնելու ձեռնարկէր, ինչ տեսնի մէջ այդ երկրորդ, որ յետին ծայր տղքատութեան եւ թշուառութեան միակ տիպարն էր զոր և տշխարհիս վրայ, ան ներման կերպիւ պիտի փոխուէր անցեալ վիճակը չ'ճանչցըուելու աստիճան:

Գիտեմք և տեսնեմք արդարեւ թէ Բ. Դուռն ալ այս վերջին օրերս ինքնաբերաբար և յօժաբակամ ասիական բարենորոգմանց մեծ գործոյն ձեռնարկեց, իրազօր արտօնութեամբ երկու զատ յանձնաժողովներ անուանելով, որոց մին Բարձր Հոյսը և միւսն Ստորին Հայաստան

պիտի երթայ, երկուքն ալ կեցած անտեղութիւններն բառաւ նալու և հարկ եղած ընդհանուր բարենորոգումներն հաստատելու համար:

Չայս տեսնելով և գիտնալով իսկ, դարձեալ փոքր Ասիոյ բարենորոգմանց գործոյն ի գլուխ և ի կատար ելած տեսնելն՝ եւրոպայէն սպասելին առանց պատճառի չէր կրնար ըլլալ, մանաւանդ թէ իրաւունք ունէինք գործն այդ վիճակին մէջ նկատելու, քանի որ ստուգապէս գիտէինք թէ՛ աւիական բարենորոգմանց վրայօք Դրան և Անգղիոյ միջև տակաւին բանակցութիւններն կ'շարունակուին, թէ Անգղիոյ իր պահել կարծուած առեւտրութիւնը լաւութեանն ու անտարբերութեանը հակառակ, վարկեան մ'իսկ չէ գաղաւթ պնդել և թախտն ձեռք Բ. Դրան որ առանց մանակ անցնելու՝ անյապաղ ըսկըսէ ասիական բարենորոգմանց գործոյն, ինչպէս պարտականութիւն կ'ընեն իւր վրայ թէ Պերսիին և թէ յետ կի գաղաղութեան թիւններն, և թէ Դուռն ինչքան որ այժմ այդ բարենորոգմանց գործոյն սկսած է, ինչ որ կընէ այժմ՝ Անգղիոյ և Դադղիոյ տէրութեանց ներքնութեամբ ընդ ու խորհրդով կ'ընէ, և թէ պէտք այնպէս կ'երևի թէ Դուռն բոլոր ասոնք իր նախաձեռնութեամբն ու յօժարութեամբ կ'ընէ, բայց և այնպէս ոչ ներառող ճշմարտ է նաեւ թէ՛ գործոյ նոխաձեռնութիւնն տեսիլ Անգղիոյ կ'վերաբերի, ինչքան գործելու յօժարամտութիւնը Բ. Դրան, յօժարամտութիւնն առ ի գործադրել ասիական բարենորոգումներն՝ որոյ նկատմամբ Անգղիոյ պաշտօնէսայինքն Սըր Սթիֆօրթ Նորթքոթ հարկ տեսած էր վերջին օրերս անգղ. խորհրդարանին առջին նիստին մէջ, ի 1/13 փոքր յայտնապէս զովարանել և վերայել ինքն անձամբ Դրան այս ցոյց տուած յօժարամտութեան անկեղծութեանը վրայ:

Մեր այս ըսածին ի հաստատութիւն, հարկ կ'համարեմք աստուծոյ Սըր Սթ. Նորթքոթի նոյն օրն ըրած աւանտիւսութեան և տուած բացատրութեան մէջ՝ ասիական բարենորոգմանց գործոյն վերաբերեալ հաստատած միտքն յառաջ բերել, որոյ մէջ մեր Ս. Պատրիարքին ալ նկատմամբ կարեւոր ակնարկութիւն մը կայ, ինչպէս քիչ մը վարը պիտի բացատրեմք:

Խորհրդարանաց բացման օրը, զիշեալին նիստին մէջ, Դանձուց պաշտօնէսայ և հօրհից խորհրդարանին մէջ յանուն պաշտօնէսութեան աւանտարանող Սըր Սթիֆօրթ Նորթքոթ հետեւեալ խօսքերը կ'ընէր, որք ոչ նուազ ուշադրութեան արժանի են:

Անտարակուսելի է, կըսէր, թէ ամենուն ալ մտացը մէջ՝ ամեն բան գրեթէ անհնարին արագութեամբ մը յառաջ տարուած տեսնելու բնական անհամբերութիւն մը կայ, Բայց երբ նկատողութեան առնումք անգամ մը թէ քանի՛ քանի՛ շահեր խնդրոյ տակ ինկան, ինչքան բաներ կարգադրուելով լուծուեցան, և ինչքան մեծամեծ գոյնաւորութիւններու պէտք եղաւ յաղթել, և երբ նկատողութեան առնումք բոլոր անոնք՝ որք դաշնադրին կ'ընէին ի վեր ձեռք բերուած են, կարծեմ թէ ընաւ իրաւունքը չունիմք մինչև ցարդ եղած իրական յառաջացման գէժ աճահելու:

(Ատենաբանը անկէ ի վեր մինչև ցարդ կատարուած ու կարգադրուած խնդիրներն միտք մի յիշատակելէն յետոյ, յորում առիթ մ'ալ կ'գտնէ Սըր Լէյարտի գործունէութիւնն ու զիւանագիտական ճարտարութիւնն Նախապէս կ'շարունակէ):

«Գալով Ասիոյ բարենորոգմանց գործոյն, այս մասին Դրան հետ սկսուած բանակցութիւններն շարունակելուն մէջ երբեք ընդհատում մը չէ եղած, Կարծեմք թէ Ասիոյ մէջ և կամ գոնէ այդ երկրին մէկ քանի կողմերը, կատարուելիք բարենորոգմանց նկատմամբ, ոչ այնքան իրաւացի անհամբերութիւն մը կայ, Բայց երբ նկատենք անգամ մը թէ այդ բարենորոգումներն պիտի կատարուին այնպիսի երկրի մը մէջ, որն որ 2-3 հարիւր հազարէ բաղկացեալ օտար ահագին բանակաւ մը գրաւուած կ'ընայ, կարծեմ թէ ընդունելու ենք որ հազիւ հազ տեսնուած է ասոր նման ուրիշ երկիր մը, որ այսքան սուղ և քիչ ժամանակի մէջ այսքան գործ տեսնէ:

«Արդէն Բ. Դրան կողմնէն ալ յօժարամտ արամաղութիւն մը կ'տեսնուի բարենորոգումներն սկսելու: Իւր տուած մէկ քանի հրամաններն և ըրած որոշումներն ինչ փութով ու եռանդեամբ ձեռնարկած է այդ գործոյն: Ասկից զատ տակաւին բանակցութեան տակ գտնուած ինչ ինչ տնօրէնութիւններ ու կարգադրութիւններ ալ կան ըլլալիք, որոնք կ'յուսամք և կ'հաւատամք իսկ թէ՛ յաջող և գոհացուցիչ ելքով մ'ի գլուխ պիտի հանուին»:

Անգղիացի պաշտօնէին սոյն յայտարարութեան մէջ քանիցս կրկնուած անհամբերութեան բառը, մեր Ս. Պատրիարքին ըրած ինտիմ խօսքէն կ'արտաբերուի ինչպէս Սըր Լէյարտ անշուշտ իր կ'առաջարկութեան

հաղորդած բլլալու էր, մանա-
ւանդ թէ Սըր Նորթթօթի յա-
ռաջ բերած այն առարկութիւ-
նը, թէ բարենորոգումները
«գործադրուելու երկիրը առ-
կաւին օտար տէրութեան մը
«հաղին բանակաւ գրաման
«ներքեւ կ'գտնուին», այդ ա-
ռարկութիւնը բոլորովին կ'հաս-
տատէ թէ Սըր Նորթթօթ այդ
խօսքով զոր կընէ խորհրդարա-
նին մէջ, անուղղակի կերպով
պատասխան մը տալ ուղած կե-
րեւի մեր Ս. Պատրիարքին դիտո-
ղութեանց ու թախանձանացը:

Այս կետը քիչ մ'աւելի
պարզելու համար՝ հարկ կ'հա-
մարիմք այս մասին Սըր Լէյա-
րի հետ Ս. Պատրիարքին բրած
մէկ բանակցութիւնը պատմել:

Յունի. ամսոյ 12/24ին էր,
տեղ զիտական խորհրդարանաց այս
վերջին բացումէն 19 օր առաջ,
երբ Ս. Պատրիարքը իր անձնա-
կան քարտուղար թարգմանը
Բերայ դեսպանաց կ'ըրկէր, հը-
րահանգ տալով նմա որ հարկ
եղած զիտողութիւններն ներ-
կայացնէ մեծ տէրութեանց
դեսպաններուն, իրենց կառա-
քսութեան այսքան խոստում
ներուն, Պերլինի դաշնագրին
Յուդ. յօդուածին և նոյն իսկ
դեսպանաց առ ինքն անձնագէտ
տուած վստահացուցիչ ապահո-
վութեանց հակառակ, Հայաս-
տանի մէջ տակաւին առջի ան-
հաղորդակի վիճակին ու ըն-
թացից չարունակուելուն, Հայ
ժողովրդեան դեռ կրեւո վրայ
եղած անհանդուրժելի տառա-
պանացը, և տակաւին ունէ բա-
րենորդման ձեռնարկ մը եղած
կամ' սկստած չբլլալուն վրայ:

Անդ. դեսպանը կ'պատաս-
խանէ այս դիտողութեանց թէ՝
խոստացեալ բարենորոգմանց
գործադրուելուն վրայ Հայոց
Պատրիարքն կրնայ կատարելա-
պէս վստահ ըլլալ, իսկ ատոնց
ցարդ յապաղումը բացատրելու
համար կ'ըստէնէ դեսպանը թէ՝
իրենք ալ երբ քանիցս Դրան
թախանձեր և պնդեր են որ Հա-
յաստանի բարենորոգումներն
զործադրուելու սկսի, Դրան կա-
ռավարութիւնն ալ առարկել է
թէ՝ քանի որ երկիրը օտար տե-
րութեան մը բանակին գրու-
մանը տակը կ'գտնուի, այս վի-
ճակին մէջ անկարելի է իրեն,
Դրան, ունէ բարեօրոգման գործ
մը սկսիլ կամ' կատարել:

Ասոր վրայ Ս. Պատրիարքին
քարտուղար-թարգմանն ալ կը
կրկնէ թէ, Դրան կրնայ իրա-
ւունք ունենալ մինչև մէկ աս-
տիճան իր այդ առարկութիւնն
ընելու իւր կայսրութեան երկ-
րին այն մասին համար, որ տա-
կաւին օտար զօրութեան մը գը-
րաւմանը տակ կ'գտնուի իսկ

Ս. Պատրիարքին «բարենորոգ-
մանց գործադրութիւն»ը պա-
հանջած տեղերն երկրին այն
մասն է՝ որոյ առաջական գործաց
գրաւումէն բոլորովին ազատիլը՝
կ'ախտէն աւելի է, ուստի եւ
այդ առարկութիւնը բնաւ տեղի
չունի ընել Ս. Պատրիարքին պա-
հանջմանն ու թախանձանացը,
որ եթէ միակ արժանաւոր պա-
տասխան մ'ունի՝ այն ալ Հայոց
Պատրիարքին պահանջած բա-
րենորդմանց ձեռնարկութիւ-
նը վաղ քնդ փոյթ և անյապաղ
կատարելն էր հայաբնակ գա-
ւառաց մէջ:

Առ այս դեսպանը վերստին
համբերութեան յորդորանքով
և վստահացուցիչ յայտարարու-
թեամբ մը վերջ տուած էր տե-
սակցութեան, որն որ զՍ. Պատ-
րիարքը նոյն օրը զօհոյնէն
բաւական հեռի կ'գտնուէր:

Ճիշդ սոյն տեսակցութեանը
միջոցներն էր որ Ս. Պատրիարքն
ալ մտերմական նամակներ կ'ը-
ղէր ի Լոնտրո, Լորտ:Շաֆթըզ-
պերիի, Պ. Ճօհն Պրայթի և այլ
մէկ քանի երեսփոխանաց ու
Ազնուականաց, որք ասկէ առաջ
արդէն հայկական խնդիրն պէտք
եղածէն աւելի պաշտպաներ ու
ճատագովար էին թէ՝ Լորտե-
րուն և թէ Ազնուականաց խոր-
հրդարանին մէջ, Ս. Պատրիար-
քը Հայաստանի դաւառացներ-
կայ աղեկտուր վիճակը տնոց
նկարագրելով և խնդրելով մի-
անգամայն որ իրենց յատուկ
հայասէր զգացմամբ բարհա-
ճին վերստին իրենց կառավա-
րութեան ու շարքութիւնը հրա-
ւիրել Հայաստանի բարեօրոգմանց
անհրաժեշտ կարօտ վիճակին և
դեռ այդ բարենորոգումներէն
բան մ'ալ գործադրուած չըլ-
լալուն վրայ, յիշեալ անհրա-
ժեշտ բարենորոգմանց գործա-
դրութիւնը փութացնելու հա-
մար:

Անդ. զիտացի երեսփոխանաց
ալ սոյն նպատակաւ քրած հարց-
մանն ի պատասխանի էր, որ
Գանձուց պաշտօնեայ Սըր Սթ-
նօրթթօթ խորհրդարանաց բա-
ցուելուն առաջին նիստին մէջ
կ'փութայ իրաց վիճակը բա-
ցատրել, ինչպէս կ'տեսնուի վե-
րոյգրեալ ատենաբանութեան
հատուածին մէջ:

Անդ. զիտ. պաշտօնէութիւնը,
որոյ վրայ մեծ տպաւորութիւն
ըրած էր անշուշտ Տէյլի Նիու-
զի և այլ օրագրաց մէջ հրատա-
րակութեան տրուած Ս. Պատ-
րիարքին դժգոհութեամբ խա-
ռքն նամակներն, այս առթիւ
զինքը հարցապնդող երեսփո-
խանաց և Ազնուականաց անձին
վրայ, սլաշտօնապէս մեղադրել
կ'փորձէր ասիական բարենորոգ-
մանց ցարդ ետ մնալուն նկատ-

մամբ մեր Ս. Պատրիարքին բա-
տէպ ցոյց տուած անհամբը-
ութիւնն ու դժգոհութիւնը, և
թերեւ ներքին վիշտ և նեղու-
թիւն մ'ալ կ'զգար թէ ինչո՞ւ իր
տուած բացարձակ վստահու-
թիւններն ու համբերութեան
յորդորներն պէտք եղած աղ-
ղեցութիւնն ու կարեւորու-
թիւնը չունէին Հայոց Պատրի-
արքին մօտ:

Ասի այն աստիճան ստոյգ է
որ՝ նոյն ինքն Ս. Պատրիարքը
դեսպանաց ուսանց կողմանէ յի-
շեալ բարենորոգումները գոր-
ծադրուելուն նկատմամբ առած
վստահացուցիչ ապահովու-
թեանց՝ սոսկապէս քաղաքավա-
րական խօսքեր եղած ըլլալէն
աւելի արժէք և կարեւորու-
թիւն մը չէր ընծայեր, այնքան
յուսահատած էր իրաց ունենա-
լիք ելքին վրայ, այնպէս որ
երբ ներկայ տարեգլխին գաղղ-
դեսպան Պ. Յորնիէ, Ս. Պատ-
րիարքին այցելութեան գոյն
յետոյ բամբուած միջոցին, յատ-
կապէս քրած այն յայտարա-
րութիւնը թէ՝ «գաղղ. կառա-
վարութիւնը յօժար և տրամա-
դիր է ընել ամեն ինչ որ բարի
է Հայոց համար, բայց կամաց
կամաց», իբրեւ կարի վստահա-
ցուցիչ յայտարարութիւն մ'ըլ-
լալ կարծուեցաւ ներկայ գըտ-
նուողներէն մէկուն կողմանէ,
անդէն Ս. Պատրիարքը կ'փու-
թայր պատասխանել թէ՝ «ասոնք
բոլոր քաղաքավարական խօսքեր
են, որմէ զատ ուրիշ կերպով չեն
«կրնար խօսիլ դեսպանագէտ-
«ներն, ասոնք միշտ պոպէս կը-
«սեն ինձ սկիզբէն ի վեր: Բայց
«տակաւին ցարդ բան մ'ալ ը-
«րած չունին»:

Հայոց Պատրիարքն հարկաւ
մինչև աստիճան մը իրաւունք
ունէր այսպէս անհամբըր ըլլա-
լու և իրեն տրուած դեսպանա-
կան վստահութեանց կատարե-
լապէս հաւատ չընծայելու, այն-
պէս որ եթէ անդ. դեսպանը
կամ Սըր Նորթթօթ ինքը Հայոց
Պատրիարքին տեղն եղած ըլ-
լար քայն ատեն թերեւ կրնար
հասկնալ այդ անհամբըրութեան
պատճառը, և փոխանակ մեկա-
դիր լինելու՝ թերեւ իրաւունք
ալ տայր:

Բայց և այնու հանդերձ
Անդ. զիտ. կառավարութեան յայ-
նուղղակի մեղադրանքը չվը-
տացներ սչ զոր, նկատելով թէ
այդ յայտարարութեանն ոչ չառ-
ետք՝ նոյն իսկ Բ. Գուռը կա-
ճապարէ ասիական բարենորոգ-
մանց առաջին քայլն առնուել,
Անդ. զիտ. տուած խորհրդոցը հա-
մաձայն, և նոյն ինքն անդ. զիտ-
ցի նախարարն ալ կ'յայտարարէ
թէ՝ տակաւին այս մասին Դրան
հետ կարգադրուելիք չոր տնօ-

րէնութիւններ ալ կան, որք
դեռ բանակցութեան ներքեւ են,

Թէ ինչ են կամ ինչ կրնան
բլլալ Անդ. զիտ. և թուրքիոյ մէջ
դեռ բանակցութեան տակ գա-
նուած այդ կարգադրուելիք
տնօրէնութիւններն, անձանթ
են դեռ, բայց սակայն հաստա-
տապէս կապացուցանեն թէ՝ ա-
սիական բարենորոգումներն՝ ա-
նանկ լիազօր իշխանութեամբ
երկու յանձնաժողովներ ընա-
րելով չպիտի լինայ, այլ թէ
ասկէ զատ ուրիշ խնդր մը տնօ-
րէնութիւններ ալ կան ըլլալիք,
Անդ. զիտ. պահանջմամբն ու խոր-
հրդովը, որք երբոր ժամանա-
կը գալով երկան գան՝ այն ա-
տեն ինչ բլլալին կ'հասկցուի:

Մեր բոլոր այս ըսածներէն
սա կուզենք հետեւեմ թէ՝ փո-
քր-Ասիոյ ապագայն անանկ
կարծուածին պէս՝ սոսկ Դրան
կառավարութեանը ինքնահաճ
կամքին չէ թողուած, ոչ ալ
յնա. կի անկո-տաճկական դաշ-
նագրութիւնը գրեթէ ոչինչ կամ
անզօր մնացած է Դրան դժկա-
մակութեան առաջը, ինչպէս ո-
մանք կ'կարծէին, այլ թէ պէտք
է հաստատապէս գիտնալ որ
Ասիոյ մէջ ինչ որ պիտի ըլլայ և
ինչ որ պիտի գործադրուի Դը-
րան ձեռքով, ամենքն ալ յնա-
նի դաշնագրին զօրութեամբ և
Անդ. զիտ. կառավարութեան խոր-
հրդոցն զիտակետին համա-
ձայն պիտի գործադրուի:

Անդ. զիտ. այդ դիտակետն
ալ պիտի բացատրեմք յաջորդ-
յօդուածով մը:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Ընդհ. Ժողովը դանդաղ
նիստ ունի վաղը ի Ղալաթիա,
Օրակարգ. ունենալով «Մրազիր
Հայկական խնդրոյ ի գիմաց
խորհրդարանական Յանձնախմբ-
«րին»:

ԱՅԼԵՆԻԱՅԼԻՔ

Խաղաղութեան վիճակն հա-
տատուելուն պէս օսմ. բանակին
թիւը 130.000ի պիտի իջնէ:

— Խոսքիւղի աղջկանց վար-
ժարանը անցեալ գիշեր երկրորդ
անգամ գող մտեր և 350 զրէ-
չամ ստակ ու անեղնագործու-
թեան նիւթեր վերուցեր են:

— Տօնաւթօք Բօրսաքօք իշ-
խանը կամ Թոնօվալի կամ Բուս-
ճուքի մէջ պոլկարական ազգ-
պանք մը հաստատուելու միտք
ունի եղեր:

— Անցեալներն ըսուեցաւ թէ,
Մէքքէի մօտերը ոսկւոյ նոց
հանք մը գտնուելով, յիշեալ
հանքէն 12 անուակ բան հոս-
մայրաքաղաքս զրկուեր էր ի-
բըր օրինակ:

Մտուգիւ յիշեալ հանքին

բաղադրութիւնը լուծուելով, տեսնուելէ թէ՛ ամեն մէկ հազար հոխայ հանքին մէջ 2 ու կէս տրամ ոսկի. 230 տրամ արծաթ և 150 տրամ ալ ուրկնձ կ'գտնուի եղբր:

—Արքունի նաւարանի տաճիկ գործաւորներն, իրենց աւուրչէք վարձքը չկրնար առնելուն պատճառաւ գործադուրբիս են:

—Բարիզէն հասած վերջին հեռագիր մը կ'ժանուցանէ թէ, Թոթովի ծրագրին առաջարկած փոխառութեանը վերջնապէս կնքուելուն դէմելած զբաղաւոր արդեւորներէն մին սա՛ է եղբր թէ՛ ապագային մէջ՝ փոխառուներուն և Բ. Դրան միջև լուծուած հարցի մասին կամ գծառութիւն մը եթէ պատահելու ըլլայ, ո՞ր դատարանին պէտք պիտի ըլլայ դիմել:

Փոխառուներուն առջին օամ: դատարաններն հարկ եղած երաշխաւորութիւններէն զուրկ նկատելով, կ'առաջարկեն եղբր ասանք որ կամ փոխառութեանը կնքուիլը ետ մնայ մինչև որ դատաստանական բարենորոգում մը ներմուծուի Թուրքիոյ մէջ, և կամ ընդունել տրուի Բ.Դրան որ իր և փոխառուած միջև եթէ գծառութիւն մը պատահի, դատը իրաւարար յանձնաժողովոյ մը միջոցաւ տեսնուի, որոյ անդամոց մեծամասնութիւնը եւ ըրազանքներէ բաղկացած ըլլայ:

Բարիզէն գրուած չորիշ նամակ մ'ալ կըսէ թէ՛ գաղղիացի դրամատեսարք օյժմ'նոր սկսեցին Թոթովի ծրագիրը լուրջ նշեկատուութեան մը առնուլ, և թէ այդ ծրագրին ցոյց տուած հիմք վերջնապէս ընդունուիլը հաւանական համարուելով, այն շահագէտներն որք անվտանգութեամբ վերջերս օամ. արժէթուղծ սկսած էին ծախել, հիմայ ալ սկսեցին բացդրին գոցել, որպէս զի յանկարծակիի չգան օամ: Թղթերը վեր բարձրանալու երես բռնած միջոցին, այնպէս որ հիմակուրէն կ'կարծուի եղբր թէ՛ օամ: քոնսոլիտէի ամենէն նուազագոյն գինը 18 դր. պիտի ըլլայ եղբր:

—Ասի տելեգր. կ'համարի մը լրտել թէ՛ սոսկ իբրեւ լուր կ'տամք, և ոչ թէ իբր հետեւելու արժանի խորհուրդ մը:

—Թոթովի կ. Պոլսոյ թղթաւոր կիցը կ'գրէ թէ Թոթովի ծրագիրը գաղղ. սեղանաւորաց կողմէն մերժուել է, թէ նոր 8 միլիոնի փոխառութիւնը օամ. արժէտեսարց համար օգուտ մը պիտի չունենայ, ցոյց տրուած երաշխաւորութիւնը անբաւական նկատուել է. Պ. վատինկթօն ծանուցել է Դրան թէ իր

ուղած երկու Բոմիսերները չը պիտի ընտրէ, և եթէ յանձնաժողովն ընտրուի՝ այն ատեն Անգղիա և Գաղղիա Թուրքիոյ ոչ միայն գանձային՝ այլ և քաղաքական ընթացից ալ վրայ հսկելու և միջամտելու պիտի պարտաւորին, թէ ներկայ թղթադրամը վերցուելէն ետքը՝ վերջէն ուրիշ նոր թղթադրամ պիտի հանուի, և այսպէս բոլոր զահարութիւնք առ ոչինչ զայսած պիտի ըլլան:

Թոթովի մարդիկը Բարիզէն փետր. 16 թուով նամակ մ'ուղղելով Թոթովի, ասանց մէկ մասը կ'ժխտէ և մէկ մասին ալ պէտք եղած բացատրութիւնը կ'տա:

—Բոտկորիցան Գարատաղի յանձնուած ատեն, ամբողջ ազգամեծերն ու բունէն լիցուող անդղիական թնդանթները ալ միատեղ յանձնուել են, որոց համար Գարատաղի կառավարութիւնը 8000 Նաբօլէոն ոսկի վճարել է Թուրքիոյ, ինքն ասկէ 900.000 քարպօնի առագանք մը պահանջելով հանդերձ՝ պատերազմական գերեաց ծախուցը համար:

—Կիպրոսէն գրուած նամակներն կ'ժանուցանեն թէ՛ կենաց ամենահարկաւոր և անհրաժեշտ պիտոյքն և ուտելիքներն այն աստիճան սուղցել են, որ մարդոց վտանակը անբաւական գալով ընակիչք ալուր պիտի պարտաւորին գաղթելու, եթէ ուտելիք գինը չափնայ:

—Բուլմանիոյ կառավարութիւնը որոշել է առողջապահական գիծ մը հաստատել Դանուբի ձախ գետից վրայ:

—Էտրէի մէջ յունաց մետրապօլիտին եղածին պէս, Տիմիթօքի մէջ ալ Պուլկարները յունաց առաջնորդարանը կուխեր են, իսկ մետրապօլիտին իսկոյն փախչելով, մինակ առաջնորդարանին ապակիներն ու կահկարասիքը խորտակուելու ջարդու բուրդ հանուել են:

—Արեւելեան Բուլմէի պուրկարներն յայտնել են Սթոյիլին զորապետին, որ եթէ Ռուսք ետ քաշուին, իրենք օամ: զորաց դէմ պիտի կուտին ներս մտնելին արգիլելու համար:

—Հիւսիսային Ալպանիոյ մէջ տաճիկ շօճաններ և ուրիշ լրբատեսներ կ'քարոզեն եղբր որ Ալպանիան ալ Նովի-Պադարի հետ միատեղ Աւստրիոյ ձեռքն անցնի: Միւս կողմէն Թրիէսթէն ալ նամակներ կ'գան եղբր Ալպանիացոց, յորդորելով զանոնք որ Յունաստանի երկիր տրուելուն հաճութիւն չտալով, ի հարկին զէնքով ալ դէմ դրնեն:

—Չէրնախի զորապետին

Թրիէսթ գալով պուլկարաց աղաքին բանակին հրամանատարութիւնն առնելուն դէմ Բ. Դուռը ինչ ինչ դիտողութիւններ ընելով Լոպանօֆ իշխանին, ստի ալ իր կառավարութեանը գրեւ, և Չարն ալ Չէրնախի քննէն Ռուսաստան կանչել է:

—Տաճկառուական վերջին գաշնադիրն Չարէն վաւերացուելուն առթիւ, նոյն օրը փետր. 16ին յատուկ պատարագ եղբր է Բէթէրպարկի Մայր եկեղեցւոյն մէջ և 101 թնդանթ արձակուել է, ապա զօրահանգէս մ'ալ եղբր է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՃՄՈՒ

Հոնորա 25 փետր. Միւլային գործոց պաշտօն. եայ Պ. Սմիթ այս երեկոյ ծանոց Հարկ. Խորհրդարանին թէ անգղ. դրահաւոր Փերգաթօն մը և գաղղ. պատերազմական նաւ մը հրաման ստացել են եղիպտոս երթալու: —Այսպիսի տնօրէնութիւն մ'ընել վաղիս. քնի դատուել է ներկայ պարագայից մէջ, իսկ նաւերուն հրամանատարացը առ արժանէ մասնաւոր հրահանգ մը չէ տրուել:

Երէկ և այս առաւօտ Հաւասի ոչ քաղաքական և ոչ դրամական ունէ հեռագիր մը չը կայ առնուած:

ԳՐԵՄԱԿԱՆ

Այս առաւօտ բացուեցաւ	12.30
Թղթադրամ	441.00
Բուլմէի	49.25

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Աւստրիոյ հետ կնքուելիք գաշնագրութեան բանակցութիւնը գահացուցիչ կերպիւ յառաջ տարուելու վրայ ըլլալով, մօտ օրէն կնքուիլը կ'ուսուցուի:

—Յունաստանի սահմանագրելոց խնդրոյն համար երրորդ անգամնոր հրահանգ զրուելու Դրնէն Մուխթար բաշայի:

—Արեւելեան Բուլմէի յանտարմայի զրութեամբ ոտակաւորութիւն մը կազմուել համար, Անգղիոյ և Դաղղիոյ կառավարութեանց կողմէն մարդիչ քապաններ զրկուել է Ֆիլիպէս:

—Իսկ Պուլկարը ալ կ'շարունակեն եղբր սպառազինուելու և զինավորութիւն ընել Չինուց վարժութեան ներկայ չգտնուողներէն հիւանդաց վրայ մէկ քարպօն, իսկ առողջներուն վրայ 1 բոլ առագանք զրուել է եղբր:

—Բ. Դուռը հրաման զրկել է Բարիզի և Հոնորայի օամ. դեսպանաց, որ Թոթովի ծրագրին քննութեան ու բարեփոխման իրենք ալ գործակցին: —Չարն կայ թէ փոխառութեան առաջարկին եղբր որ առայժմ թղթադրամը վերցնելու եւ Գանձուն անհրաժեշտ պիտոյքը հոգալու համար թերհաշիւ մը գրամ փոխ տան Թուրքիոյ, իսկ վերջնական փոխառութիւն

նը՝ Թուրքիոյ ընդհ. պիւնէին քննութեան յետոյ կնքուի Աստից միտքն է եղբր Թուրքիոյ բոլոր մաքսատանց տեսչութիւնը եւրոպական խառն յանձնաժողովի մը ձեռքը յանձնելու: Այս մասին Բ.Դրան կողմէն մեծ տէրութեանց չըջարեալական ծանուցագիր մը պիտի զրկուի կըսեն մօտերս:

—Վանէն քաշած հեռացի մը կ'ժանուցանէ թէ՛ Գ. թուրի Դահանգը Պարսկաստանի յանձնուել է վերջնական կերպով, և այս առթիւ 21 թնդանթ օթ նետուել է:

—Կարնոյ վիտակայ Կիւմուսի Հաղթը բաշա երէկ Տրապիզոնի շոգենաւով մայրաքաղաք հասել է, և Արաքսայ նաւը բաշայի տունը հիւր իջնելով, անմիջապէս պատերազմի պաշտօնէին այցելութիւն մը տուել և հետք երկաթօրէն տեսակցել է:

—Թէքիրտաղի և Սիլիվրիի օամ: զօրաբաժնին հրաման տրուել է յառաջ շարժելու:

—Թրաքի յունացիներ թերթը տպագր. տեսչութեան կողմէն 15 օրուան համար դադարման հրաման ստացել է. Յունաստանի սահմանադիրոց ողջութեանը վրայ գրած յօդուածին պատճառաւ:

—Տիմիթօքի Գունուց մետրապօլիտին դէմ պուլկարաց կողմէն եղած անկարգութեան ցոյցին առթիւ 2-3 խուր և ուսակա զօրաց պահպանութեանը ներքեւ զրուել է առաջնորդարանը, ուր կ'գտնուին եղբր մետրապօլիտը և տեղւոյն Միւլթէսայրֆը Ծորճի բաշայ:

—Էտրէէն կ'գրեն թէ՛ Յունաց մետրապօլիտին դէմ տեղի ունեցած խժգժական դէպքին վրայ քաղքին հրամանատարը Մ'օլսթօֆ զօրապետը պաշտօնէն ձգուելով, Սքօպէլէֆ զօրապետը Էտրէի հրամանատար տնտեսներ է: Կ'հաւատեն թէ Էտրէի սոյն անհաճոյ դէպքը Բէթէրպարկի հեռագրութեան պէս, Ռուսիոյ կայսրը այն աստիճան սրանեղբր ու գաղղացիներ է, որ անմիջապէս Թոթովէպէն զօրապետին սա՛ խմաստիւ հեռագիր մ'ուղղել է թէ, Էտրէի մէջ առաւելան բանակ մը գտնուած տան, բնաւ մէկ տէրութեան մ'ընդունել չլըրցած, այն է եկեղեցական հովուի մը դէմ պայքարի անարգանք մը տեղի ունենալու դէպքը՝ Էտրէի բարեկարգութեանը վրայ հրկելու պաշտօն ունեցողներուն անհագութեանն ու ապիկարութեանն յառաջ եկած ըլլալով, պէտք է որ Բէ՛ տոց գործին մէջ մեղսակցութիւն ունեցող պուլկարներն ձեռքաւ կալուելով պատմութիւն, եւ թէ այնպիսի միջոց մը ձեռք առնուի որ մէկ մ'ալ այսուհետեւ այսպիսի անհոգութեան դէպք մը կրկնութիւնը չպատահի:

Այս հեռագրին վրայ է եղբր որ Թոթովէպէն զօրապետն ալ Մ'օլսթօֆը պաշտօնէն ձգելով անոր տեղ Սքօպէլէֆը Էտրէի հրամանատար զրկել է:

ԸՆԴՀ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՀԱՄԱՐՈՑ

ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑԱՅ ՀԱՄԱՐ
Գրեց Հ. Գրիգոր Վ. Գովրդեան
Միտք. Ուսման
Վիեննա Միտք. Տպարան 1879

Բովանդակութիւն.—Միջին ու
հոր Պատմութիւնը՝ մինչև մեր օրե-
րը հասցնող, համառօտ բայց կա-
տարեալ զեպքերն, մասնաւորապէս
ազգ. դպրոցաց գործածութեանը հա-
մար շինուած է.—Հաստ հմուտ գը-
րութիւն է, որ յայտնապէս կերելի
գերմանական ճաշակ ու խորունկ
հմտութիւն.—Ստոր արժէքն այնչափ
աւելի մեծ է, որչափ առաջիններէն
մէկն է ազգին մէջ, իրեն դասա-
դիրքը Վասն զի թէև կայ հաստ մը
սակէ 30 տարի առաջ հրատարակ-
ուած, բայց և բաց անկէ, որ դուրի է
բոլորովին հաստատուն գրութիւնէ,
չառ ընդարձակ բռնուած է և Պատմ-
ութեան հոգին ու ծուծը թող տա-
լով, աւելի դուրսնալուց ու զրոյց,
նորու միտ դրած է, որ պատմու-
թեան չէ՛ թէ էական, այլ երկրոր-
դական, մասնաւոր թէ երրորդական
մասը կ'կայցուցանեն։ Ուրիշ այլևայլ
տեղեր ու այլևայլ ժամանակ հրա-
տարակուած պատմութիւնները ամ-
բողջ չեն, մասնական են, ուստի իր-
րեւ գործածութեան մէջ մտնելի
զրգեր, հասարակութեան ձեռքը
դնու չեն կրնար տրուել։—Ուր թո-
ղուք որ մատենագիրը, շատ մաս-
ցիր հայեցումով մ'ըրած է նաեւ
ազգ. պատմութեան, գոր մինչև մեր
օրերը հասցնած է՝ թուականներու
հարկութեամբ։ Կ'գտնենք ասոր մէջ
նաեւ ազգ. մատենագրութեան վրայ
բաւական տեղեկութիւններ։
Մաքուր տպագրութեամբ 296
էջ պարունակող սոյն գիրքը, համե-
մատութեամբ շատ ատեն է, 2 ֆը-
րանք գնով, կը ծախուի Վիեննայի
Միտքարանց գրաւաճառանոցն ի
բանկալթի և ամեն ազգային գրա-
վաճառաց քով։

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼԵԱՆ՝ ՊԱՏԵՐԱԶՄԻ
Թարգմանելի Գաղղիականէն

Վերջին տաճկա-առասկուն պա-
տարագմն արայով դադարեցնելով
սոյն մէջ մէկ քանի տարբեր հիշե-
նակութեամբ հրատարակուած գոր-
ծերէն ամենէն անկողմնակալն ու
հարստագրուածը Ա. Լ. Ֆոսի երկն
ըլլալով արտ հայերէն թարգմանու-
թիւնը տեսար առ տեսար սկսած է
հրատարակուիլ, Արամեան տպագ-
րութեամբ, մաքուր թղթի վրայ, և
մեծադիր և քառասուն իւրաքանչիւր
տետրը 2 պատկերօք դարգարեալ։
Սոյն հրատարակութիւնը խիստ
հետաքրքրական է միանգամայն
օգտակար գործ մը ըլլալով, կը հը-
րախորհի յարգող հասարակութիւնը
մէկ մէկ օրինակ ունենալու անկէ,
որով թարգմանչին աշխատութիւնն
ու խնամքն արդիւնաւորեալն ալ
պատեալ մը կրնայ։
Ա. և Բ. տետրը հրատարակ-
ուած են։ Կեդրոնատեղին է Գը-
րէկեան գրատունը, գին թերթին
1 շրշ արծաթ։

ԱԶԳ.
ՎԱՃԱՌՈՒՄՍՈՒՆ
ԶԳԵՍՏՈՒՑ

Ֆ. ԿՐԱՆՊԱՌԱՄ և ԸՆԿ.
Եւ քանք Գալտրերմ թիւ 70
Հալտթիա
Վիեննայի մէջ շինուած բն-
տիր ապրանքներ կ'ծախուին ինչ
մեծ քանակ և թէ հաստով,
գոհացուցիչ գիներով։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՏԵՏԵԱՆ
ԺՕԶԵՑ ՊԱԼԱՍԱՄՈ
ԹԱՐԳՄԱՆԵՑ

Աղէլաւոր Տիւմա գաղղիացի
մեծանուն վարպետին գրչէն ելած
սոյն գործին ճիշդ այն է վերջին հա-
տարն ալ իջմիրի Տէտէեան եղբոր
տպարանէն ի լոյս բնծալուելով Պոլս
հասած է։ Այս գեղեցիկ վէպին մէջ
ուր Լուի Ժիւի կեանքը, վարքն ու
վարձանը նկարագրուած են, հետ
զհետէ կ'ընկայանան Վոլթէն եւ
Ռուսո, անցեալ դարուն այն երկու
մեծ մարդիկը, թագուէ զիտութիւն-
ներ կ'այտնուին, Մասնաց օթեակ-
ները օտարին առջև կ'ապրուին։ Ա-
մեն կարգի և հասակի մարդ էւր
ս'ըրած իւրեք հոն կ'գտնուէ Եւրո-
կրէր հաստէսի թիւ 2 Ու. Կուկա-
սեան գրատունը և ուրիշ գրաւա-
ճառաց քով։
Գին 2 ֆրանք 28 սնթ.

ԿԵՅԼՈՄ ԹԵԼԼ
ՈՂԵՐԳՈՒԹ. Ի ՀԻՆԳ ԱՐԱՐՍ

Թարգմանեաց գաղղիականէն
Միտք. Ա. Կեւլապեան
ԱՆԴԱՄ
Քարտուղարաց գիւտներն
Արտաք. գործոց պաշտօնատան
որ ի Բ. Դուռն
Շիւթեր գերմանացի հոգաւոր
հեղինակին ընտիր գործերէն մին
եղող սոյն սրբերգութիւնը մէկ նոց
թղթադրամի կը վաճառուի Վ. Յ.
Մարգարեանի գրատունը Մէրճան-
Չարը թիւ 57 և ամեն գրաւաճա-
ռաց քով։

ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ
ՅՕՐԻՆԵՑ Մ. ՄԱՄՈՒՐԱՆ

Կ'ծախուի Եւրի-Ճամի Զիւն-
կիրէր հաստէսի թիւ 2 Ս Ղու-
կասեան գրատունը և ուրիշ գրաւա-
ճառաց քով։
Գին 1 ֆրանք

ՇԱՐԳ
ՄՈՒՀԱՐԷՊԵՍԻ ՀԻՔԵԱՅԵՍԻ

Հեղինակութիւն
ՊԱՐԳԱՆ ՊԵՏԵ
Վսեմ. Վարդան Պէյի գրչէն
ելած սոյն ընտիր պատմութիւնը՝ յոր
մինչև հիմայ թէրճէմանը—Եֆընար
լրագրոյն մէջ մաս առ մաս կը հը-
րատարակուի, այս անգամ կրկին
սրբադրութեամբ թերթ առ թերթ
հրատարակուի սկսած է մաքուր
տպագրութեամբ, և որուն ութը եւ
րեսէ բաղկացեալ մէկ թերթը՝ 3
շրշ և ասոր թերթերէ բաղկացեալ
մէկ մասը 30 շրշ և երեք մասերէ
բաղկացեալ մէկ հատորը 30 շրշ կը
ծախուի ողջ թղթադրամ։
մէկ հատորի համար մ'այն բա-
ժանորդ կրնայ ընդունուիլ կանխիկ
10 շրշ վճարելով։
Բաժանորդագրութեան տեղն է
Կ. Պոլս Սուլթան համամ նշան էֆ
Պէրպէրեանի գրադարատունը, Բե-
րայ Թարքա Պաշի Համոկամ ընկ-
զի օտարանը Էտրոնէ, Սարաճեանէ
Հարըրը Հաճի կարտադրու Ասատուր-
եան ի խանութը։
Թերթ առ թերթ կամ մաս առ
մաս վերագրեալ տեղերէն գտնուի հե-
տեւեալ հեղերն ալ կը ծախուին։
Պոլս Լամի Էօնիւ Սուհի Պոզոս
տպար խանութը, Բերայ Մեծ փողոց
ժապավենաւոց խանութները, Թարքա
Պաշի ծխափաճառ Անգրէա աղուի
խանութը թէ՛ Պոլս և թէ՛ Ղալա-
թի յարգարգրաւաճառաց քով։
Տէր և հրատարակչի Միհրան Ս.
Գրիթապեան։

Հալտթիա ԳԾ. 14 փետր.
ԸՆԴՀ. ՊԱՐՏ. ԱՐԺ.

Բաց	13 24
Դոց	13 25
Բարձր գին	13 27
Յած գին	13 22
Թղթադրամ բաց	441 00
բարձր	442 00
ցած	440 00
ժամը 11	440 20
Փոխ. 63ի	Փր. 075 00
» 65ի	» 079 00
» 69ի	» 077 00
» 73ի	» 073.00
Գանձատու	23 50
Սօսիթէ Ժէնէրալ	4 20
Սօսիթէ Եթիօպի	3.90
Պանք ար Բոնաթ.	6.16
Բրէտի Ժէնէրալ	5 15
Թրամիէյ	1.75
Բոււ. Երկաթուղի	48.75
ԸՆԹԵՐԳՈՒԹ. ԴՐԱՄՈՒՐ	
(Ու. Կ. 100 Կ. Կ. Կ. Կ.)	
Անգլ. տակ	109.05
Գաղղ.	87.11
Բու.	89 13
Բարպոն արծաթ	16.20
» թղթադրամ	09.00
Բրամից	51.10
Հինգնոց	23.20
Մէթալիք	24 10
Ճերմակ մէճիտ	07.08
Պրինձ	183.00

ՄԻՆԱՍԵԱՆԻՆ ՄԱՂԱՂԱՆ
ԳՏԵՆՈՒՄ

ՓԱՆԱՍԵ

Կոչուած ցաւի դեղը բոլորովին
բուսեղէններէ բաղադրուած ըլլալով
թէ՛ ներսէն և թէ՛ դուրսէն կը գոր-
ծածուի ու բազմաթիւ ցաւեր ու հի-
ւանդութիւններ շուտով կը բժշկէ,
ինչպէս որ վարը յիշուած է։
Ամեն տեսակ փոփ, Բատմոք-
սի, մէլէի կամ լիզիքներու ցաւեր.
ու նաեւ թանջը, Քոլէրա և այլ ա-
մառուած հիւանդութիւններ ունե-
ցողները այս դեղէն խմելու են հե-
տեւեալ կերպով։ Այն գաւաթ ջուրի
մէջ, զոր ապուրի մը զրգալէն աւելի
չաքար, վրան լիցուր անուշի գրգռ-
մը փանստէ աղէկ մը խառնէ ու
խմէ։
Կոկորդի հիւանդութեանց, և
Ուռեցիի համար դեղը վերայիշեալ
կերպով պատրաստէ ու ժամը կամ
երկու ժամը հեղ մը՝ մէկ կամ
երկու անուշի գրգռ այն բաղադ-
րութեան խմէ։ Յօդացաւի, Բիւմա-
թիզմի, Ուռի ցաւի, Ստամոքսի ող
տեսակ տեսակ կանախ ցաւերու հա-
մար գործէն փանստէ քաղով աղէ-
մը շինելու է։ Այնպիսի ցաւի համար
քիչ մը բամպակ վանստէի մէջ
թաթիկով ցաւած ակոյսին վրայ
դնելու է։
Ամեն տեսակ երրոր ցաւի մը հա-
մար գործէն փանստէ քիչ հաթիկ
կըլլայ, եթէ քիչ մը ալ խմուի աւել-
ի շուտ բժշկութիւն կըլլայ։
Մարմնոց սրտուած կամ ճմրու-
ած տեղերը բժշկելու համար վրան-
զը պատահածին պէս փանստէին
վրան աղէկ մը լիցնելու է։ Գոնա-
կով կըն. կտրուած վերքերը բժշկե-
լու համար՝ արեւը շարժած շուտով
մը վերքը կապելու և կապին վրայէն
փանստէ լիցնելու է մինչև որ Լաւ մը

թրջի փանստէն նաեւ արեւն շրջա-
նը նորագոյնէ ու բոլոր բնութիւնը
կը գործէ։
Այս դեղին օգտակարութեանը
վրայ երկարօք էն գրել աւելորդ կը
համարուի, գործածողները զայն
միշտ կը գովեն, ուզողը կրնայ ան-
ձամբ փորձել. գինն աժան է։ Կը
ծախուի Միհրանեան և Բնկերաց Ա-
մերիկեան վաճառատունը որ ի Ղա-
ւաթիա Կ. Պոլսոյ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՆՐԱՏԱՐԱՆ ԿԵՍԱՐԱՆ
ԳՈՐԾ ՍՈՒԵՏՈՒՐՈՍԻ
ԹԱՐԳՄԱՆԵՑ Ե. Ս. Ս.

Սոյն պատմութեանը երկրորդ
և վերջին հատորն ալ իզմիրի
Տէտէեան եղբորոց տպարանէն
ի լոյս բնծալուելով, կ'ծախուի
ինչիւ-ճամի Զիւնկիրէր հաս-
տէսի թիւ 2 Ս. Ղուկասեան
գրատունը, և ուրիշ գրաւա-
ճառաց քով, Գին 1 ֆրանք 25
սնթիւմ։

ՐԱՆԱԼԻ
ՀԱՅԵՐԵՆ ԵԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ
ԳՐԵՑ

Մ. ՄԱՄՈՒՐԱՆ
Ա. հաւաստի գեղեցիկ մեթոտ մը

Մամուրեան էֆի աշխատասիրու-
թեամբ մուտ գտնելով մայրենի լեզ-
ուի ուսման մէջ, կ'աւանդորդէ ա-
շակերտները շարադիր լինելու, չըս-
պատելով որ անոնք քերականութեան
տաղտկալի չլինեն անցին։

Այս գրքիցը Զմիւռնիոյ Տէտէ-
եան եղբորոց տպարանէն ի լոյս ըն-
ծալուելով կը ծախուի Եւրի-Ճամի
Զիւնկիրէր հաստէսի թիւ 2, Ե-
Ղուկասեան գրատունը և ուրիշ գր-
աւաճառաց քով։ Գին 50 սնթիւմ։

ՆՈՐ ՕՐԱՅՈՅՑ
1 8 7 9

ԹՈՒԱԿԱՆԻ ՔՐԻՍՏՈՍԻ
Կ'ծախուի գին 20 փարա մէճիտ

ԸՆԴԱՐԱՆ ՕՐԱՅՈՅՑ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
1 8 7 9

ԹՈՒԱԿԱՆԻ ՔՐԻՍՏՈՍԻ
Գին 40 փարա մէճիտ

ՏԳԻՐԵԼԵ ԶԵՐԵԼԵ
15 կենդանադիր պատկերներով

դարդարեալ սոյն ընդաճակ օրացոյցը
բաց ի թուս օրացոյցէն կ'պարունակէ
նաեւ վերջին Ռուսո—Տաճկական պա-
տերազմին համառօտ պատմութիւնը,
առողջապահական ամենակարեւոր
գիտելիքներ, բարոյական սկզբունք,
ներ, խոյթման և այլաժի դեղեր,
միասակար ճճիւնի ինքնու կերպեր։
Առողջիւ զատ աղգալին նշանաւոր
բանաստեղծ Փամաւ Բաթիպայի
«Հայերու թաղը» վերնագրով մէկ
չնախորհիկ ոտանաւորը։
Կ'ծախուի Զարգարեան վաճա-
ռատունը, Սուլթան Համամ փողոց,
Ալլաբէյի խանի դիմաց, թիւ
13 և գրաւաճառաց քով։

ՏԵՐ ԵՒ ՊԱՏԱՍԻԱՆԱՏՈՒ
ՊՈՂՈՍ ԲԻՐԻՃԵԱՆ
Հալտթիա Բերլէմպէ—Բա-
շար Պաքըր փողոց թիւ 12.